<<ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԱՄ>>

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցչների վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

թեմա՝ << <<Գրականություն>> առարկայի ուսուցման դերը որպես սովորողների արժեքային համակարգի ձևավորման գործոններից մեկը միջին դպրոցում>>

<<ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ. Մյասնիկյանի անվան թիվ N7 միջն. դպրոց >> ՊՈԱԿ-ի <<Հայոց լեզու և գրականության >> առարկայի

ուսուցիչ՝ Սուսաննա Հովհաննիսյան

ղեկավար՝ Գագիկ Էմինյան

Ալավերդի - 2022

Բովանդակություն

1.Ներածություն……..3

2. Արժեքային համակարգի ձևավորումը գրականության դասերին՝ միջին դպրոցում…6

3.Եզրակացություն…….……...13

4.Գրականություն……..15

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Դպրոցը շատ մեծ պարտականություններ և անելիքներ ունի նոր սերնդի արժեհամակարգի, դաստիարակության , կրթության գործում:Ազգային նկարագիր ունեցող, ազգային արժեքները իր մեջ կրող սերունդ ունենալ. սա է այսօրվա հայ դպրոցի գեր խնդիրը:Դպրոցը պիտի կարողանա պահպանել և ամեն երեխայի մեջ դաստիարակել դարերով եկած հայ ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքները:

Դպրոցը այսօր համամարդկային արժեքներ սերմանելուն զուգընթաց պիտի կարևորի ազգայինը ազնիվ, հայրենասեր, կիրթ, հոգևոր ու մտավոր բարձր կարողությունների տեր սերունդ դաստիարակելու համար:

Այսօր այլ է մեր ժամանակը:

Հասարակական լայն շերտերում արմատական փոփոխությունները բերում են նոր արժեքների հախուռն ներխուժմանը հասարակության ամենատարբեր ոլորտներում: Դա իր ազդեցությունն է ունենում մատաղ սերնդի մտածելակերպի, գործելու, հոգեբանության և արժեքը ընկալելու վրա:

Երեխան այդ նոր գործընթացի մասնակիցն է, կրողը նոր արժեքների, մյուսներին փոխանցողը:

Այսօր դպրոցը, կրթությունը, առավել գրականության առարկան նպաստում են սովորողի ճիշտ դաստիարակությանը, և ճիշտ ուղղորդումների դեպքում նա դառնում է դրական հերոսի հատկանիշների կրողը՝ բարի, ազնիվ, ներողամիտ, մարդասեր և ամենավեհ զգացմունքի՝ հայրենասիրության մարմնացումը:

<<Հայաստանի Հանրապետության պետական լեզուն՝ հայերենը, ազգային խորդրդանիշ է : Մայրենին կրթության լեզուն է: Նրա շնորհիվ մարդը ձեռք է բերում ազգային արժանապատվության խոր գիտակցություն, նախնիներից ստացած մշակութային արժեքները յուրացնելու և հաջորդ սերնդին փոխանցելու կարողություն>>: [3, 5]

Գրականության տեղը ուսումնական այլ առարկաների շարքում սահմանվում է որպես սովորողի բառապաշարի հարստացման , պատկերավոր մտածողության, երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական

ճաշակի ձևավորմանը զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքնագնահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց և նպաստում է բարձր բարոյական գծերի՝ հայրենասիրության, քաղաքացիական պատասխանատվության, մարդասիրության , կարեկցանքի ու հանդուրժողականության , ընկերասիրության և այլ արժեքների արմատավորմանը , անհատի դաստիարակությանը:

Իմ համոզմամբ՝ արժեքը, որը կարող է լինել և ընկալվել մտածված կամ ոչ գիտակցված, ընտրություն է, որ կատարում է աշակերտը, իսկ ուսուցիչը ուղղորդում է նրան :

Գրականությունը բացահայտում է սովորողի ներաշխարհը, նրա ներքին հակասությունները: Եթե արդյունքում ունենում ենք ներդաշնակ զարգացած անձ, ուրեմն և՛ գրականությունը, և՛ ուսուցիչը կատարել են իրենց առաքելությունը պետության և հասարակության առաջ:

Գրականության դասին սովորողը ոչ միայն ստանում է ակադեմիական գիտելիքներ այլև կենտրոնանում է իր հուզակամային, զգացական աշխարհի վրա, ձևավորում է և արտահայտում է իր վերաբերմունքը:

Այս բոլորի ճիշտ ուղղորդումը վերջնարդյունքում տալիս է մեր նպատակների իրագործումը:

Հետազոտության նպատակը.

Ներկայացնել գրականության առարկայի դերը որպես սովորողների մտավոր և հոգևոր զարգացման, արժեհամակարգի ձևավորման գործոն:

Հետազոտության խնդիրները

- Ուսումնասիրել և դիտարկել թեմային առնչվող գրականությունը:
- Բացահայտել սովորողի հետաքրքրությունները, պատկերացումները հայրենիքի, հերոս նախնիների մասին:
- Գրական կերպարների միջոցով ծանոթացնել հերոսության դավաճանության դրսևորումներին, ուղղորդել ձևավորելու սեփական դիրքորոշում:
- Վերհանել գրական ստեղծագործություններում հանդիպող ազգային և համամարդկային արժեքները, քննարկել նրանց արդիականությունը:
- Ուղղորդել՝ կատարելու ճիշտ ընտրություն իրական ու կեղծ արժեքների միջև:

- Գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության կիրառումով դաստիարակել սովորողի մոտ բարոյական վեհ հատկանիշներ:

Արժեհամակարգի ձևավորումը գրականության դասաժամերին միջին դպրոցում

Աշխատանքս գրելու համար ուսումնասիրության նյութ են ծառայել <<Սասնա ծռեր>> էպոսը, <<Սասունցի Դավիթ>> պոեմը, <<Ես և նա>> վիպակը, <<Թմկաբերդի առումը>> պոեմը, <<Փարվանա>> բալլադը, որոնք որպես ծրագրային նյութ զետեղված են միջին դպրոցի գրականության առարկայի դասագրքերում:

Բազմամյա աշխատանքային փորձս ցույց է տվել, որ գրականության առարկայի դերը մի տեսակ հետին պլան է մղվել: Թուլացել է մեր պահանջկոտությունը, աշակերտները չեն կարդում բնագրերը:

Ինչու՞… Երևի պատճառը պիտի փնտրել քննական գործընթացներում: Թեստային առաջադրանքներում մի քանի հարց գրականությունից ընդգրկելը ոչ ճիշտ մոտեցում է ավագ դպրոցում: Եթե լիներ պարտադիր քննություն նաև գրականությունից, կմեծանար <<Հայ գրականություն>> առարկայի գործառական նշանակությունը, իսկ գրականության դերի բարձրացումը անշեղորեն կապված է և դեր ունի սովորողի դաստիարակության գործում:

Անցումային այս բարդ շրջանում որոշ անցանկալի երևույթներ պայմանավորված են գրականությունից, ընդհանուր առմամբ արվեստից հեռացումով:

Երբ ամեն քայլափոխի հանդիպում ենք ընչաքաղցության, անազնվության, դավաճանության դեպքերի, որոնք դուրս են մղվում ավանդական արժեքները, հայ գրականությունը պիտի կարողանա դառնալ ներազդող հզոր ուժ:

Մեր երեխաները ամեն օր դիտում են ոչինչ չտվող (կինոնկարներ), խաղում խաղեր, որոնցում սովորական քայլ է սպանելը, կողոպտելը, անընդհատ կռիվները:

Հարգանքի չափանիշը դարձել է ոչ այն, որով պիտի վեհանա մարդու հոգին:

Սովորողի ճիշտ դաստիարակության դժվարին խնդիրը՝ դարձնել նրան վեհ հատկանիշներով օժտված մարդ, նաև գրականության առարկայի առաքելությունն է…

Միջին դպրոցի <<Գրականություն>> առարկայի դասագրքերում զետեղված գեղարվեստական նյութը սովորողի դաստիարակության խնդիրներն ու նպատակներն իրականացնելու բազմակողմանի հնարավորություն է տալիս:

Հայ գրականության ամենասիրված ստեղծագործությունը՝ <<Սասնա ծռեր>> էպոսը, վերոգրյալ նպատակներն իրականացնելու լայն հնարավորություն է տալիս:

Էպոսի դասերը շատ կողմերով համահունչ են ժամանակակից անհատի արժեքային համակրգին:

Էպոսը, լինելով հայ ժողովրդի ազատասիրական իդեալների, արդար աշխարհի, բարդ մարդկայինության մասին նրա դարավոր երազանքի արտահայտությունը, միաժամանակ հազարամյակների պատմության փորձի իրացումն է:

Հետևաբար եղած արժեքները միշտ ընկալվում և իմաստավորվում են նորովի:

Գրականություն առարկայի շատ ուսուցիչներ նկատած կլինեն, որ աշակերտները, տարիքային, անհատական առանձնահատկություններին համապատասխան, մտովի նույնացնում են իրենց այս կամ այն գրական հերոսի հետ՝ ընդօրինակելով նրա վարքը, ապրելու կերպը, հագուստը, կենցաղը, անգամ խոսքը:

Արմատական փոփոխությունների մեր դարում պետք է ճիշտ ուղղորդել սովորողին՝ նոր պահանջնորին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և ինքնահաստատվելու:

Այսօր տասնհինգամյա պատանիներն ու աղջիկները ավելի շատ ե հակված ինքնուրույնության, և պատրաստի մեկնաբանություններն ու պարտադրված գաղափարները կհեռացնեն ուսման գործընթացից:

Պետք է շեշտը դնել էպոսում վավերացված մարդկային ու բարոյական արժեքներին և դրանք կապել մեր օրերի հետ:

Էպոսի հերոսները ազատասեր են և այդ ճանապարհին նրանք չեն զրկում դիմացինին իր ազատությունից. Սասունում բոլորը հավասար են: Այս տեսակետից վերլուծելով հերոսների արարքներն ու վարքը՝ ուսուցիչը կարող է աշակերտներին մտորել տալ ազատության մասին ճիշտ պատկերացումներին, գնահատել տալ գաղափարը, ոչ միշտ իբրև անհատական, այլև հասարակական արժեք:

Գ. Եղիազարյանը <<Անհատի արժեհամակարգի կողմնորոշիչները>> գրքում գրում է. <<Չնայած բազմաթիվ են աշխարհքաղաքական և մշակութային միտումները, այդուհանդերձ բարին, ճշմարիտը, գեղեցիկը, ազատությունը, արժանապատվությունը մնում են առանցքային այն արժեքները, որոնց իրացման մասին արդեն քանի հազարամյակ խոսում են փիլիսոփաները և մշակութաբանները, և այս հասկացությունները արժևորումը գրականությանը թույլ է տալիս պահպանել պատումի լավագույն ավանդույթները >> : [1,15]

Ինչու՞ ես սկզբում ընտրեցի էպոսը:

Արժեքների գագաթի մեծագույն արժեքը՝ հայրենասիրությունը դաստիարակելու համար այն հրաշալի հնարավորություններ է ընձեռնում:

Այն էպոսի հերոսների համար ինչ-որ առանձնահատուկ արժեք չէ, որը պիտի ի հայտ գա առիթից առիթ:

Դա հերոսների կենսակերպն է, դրսևորվում է նրանց բոլոր արարքներում՝ թշնամու դեմ կռվում, հայրենիքը շենացնելում, հասարակական անարդարությունների դեմ պայքարում, ընտանեկան ավանդույթներում, բարկացած ժամին, նաև քնարական զեղումների մեջ: Բոլոր պարագաներում նրանք չեն կորցնում իրենց մարդկային առաքինությունները. Արդարամիտ են, վեհանձն, մանկան պարզ միամտությամբ, բռնության դեմ անողոք են, լավի դեմ ազնիվ: Տարիներ հետո Տերյանը իր <<Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի արջի ցեղերին…>> բանաստեղծության մեջ պիտի գրեր…

…Գերված ենք մենք, ոչ ստրուկ, գերված մի արծիվ,
Չարության դեմ՝ վեհսիրտ միշտ, վատի դեմ՝ ազնիվ…

Աշակերտը հեշտությամբ կյուրացնի այս ամենը, եթե ուսուցիչը նրա հոգում արմատավորի այն գիտակցությունը, թե ազգային արժեքները հավիտենական են. Ժամանակի հոլովույթում նրանք փոխում են իրենց ձևը, բայց բովանդակությունը մնում է նույնը:

Այսօր էլ մեր էպոսում ամրագրված արժեքները դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը:

Կիրակոսյանը իր մեթոդական ձեռնարկում գրում է . <<Անհրաժեշտ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք , որ ոչ մի մարդ , մանավանդ դպրոցահասակ պատանի, եթե հարցնեք, երբեք չի ասի ,որ ինքը սուտը գերադասում է

ճշմարտությունից, կեղծիքը արդարությունից: Բայց մտահայեցական համոզմունքը մի բան է , մի այլ բան երբ այն տեսնում ես իբրև կատարված փաստ , լինի մարդու անձնական կյանքում ,թե արվեստի ստեղծագործության մեջ: Չէ որ հների վկայությամբ արվեստում կյանքը ավելի կյանք է , քան իրականության մեջ>>:[2;64]

Այսինքն ճշմարտասիրությունն ու արդարամտությունը կարելի է ներարկել աշակերտի հոգեբանության մեջ ոչ միայն իբրև գիտակցություն, այլև որպես ամենօրյա կենսակերպ:

Իհարկե , համաձայն հին իմաստության , ճշմարտությունը կարող է հիվանդանալ, բայց երբեք չի մեռնում:

Դպրոցահասակ երեխաները միշտ ունենում են մեծ երազանքներ: Տարբեր սովորողների մոտ տարբեր կերպ է դրսևորվում այն և ունենում է տարբեր բնույթ: Լավ ուսուցչի համար յուրաքանչյուր աշակերտ մի ուրույն աշխարհ է:

Գրականության ուսուցիչը պետք է լավ ճանաչի այդ աշխարհները, իմանա՝ ինչո՞վ է ապրում նրանցից ամեն մեկը, ի՞նչ թաքուն ձգտումներ ունի, ո՞վ է ուզում դառնալ և ի՞նչ ծրագրեր ունի այդ ճանապարհին:

<<Աշակերտներին գիտելիքների փոքրիկ կայծ տալու համար ուսուցիչը պետք է իր մեջ լույսի մի ամբողջ ծով կուտակի>>: [4,2]

Տարիներ առաջ ծրագրից հանվեց և այսօր կրկին դպրոցական դասագրքում տեղ գտավ Նար-Դոսի <<Ես և նա>> վիպակը:

Աշակերտի առաջ են երկու տարբեր մարդկային նկարագրեր՝ իրենց տարբերվող հոգեբանությամբ, կյանքում գոյության կռվի սկզբունքներով, իրենց ճակատագրերով, որոնք իրենք գրեցին, ոչ թե Աստված:

Անմիջական տպավորությունների ազդեցության տակ դեռահասները կարեկցանք, հիացմունք են զգում:

Շատերը անգիր հիշում են հերոսի թևավոր խոսքը վերևի ու ներքևի մասին: Այս կերպարի միջոցով ուսուցիչը պիտի տոկուն լինելու, ինքն իրեն տիրապետելու, նպատակասլաց լինելու բարոյական դասերը համարի առաջնայինը: Երեխաները դերային խաղի միջոցով կարող են իրենց տեսնել հերոսների կերպարում, փորձել լուծումներ գտնել:

Այս կերպ կարելի է հասնել ցանկալի արդյունքի:

Մյուս օրինակը կարող է լինել էպոսի մշակման Թումանյանի տարբերակը << Սասունցի Դավիթ>> պոեմը: Լինելով մեծ մարդասեր՝ Թումանյանը կարողացել է վերհանել վեպի մարդասիրական վեհությունը:Իհարկե, Թումանյանի ողջ ստեղծագործությունն է պարուրված հումանիստական գաղափարներով, իսկ մեծատառով մարդուն նա մարմնավորել է Դավթի կերպարում:

Պոեմի Դավիթը էպոսի Դավթի նման ազատասեր է, ուղղամիտ, պարզամիտ ու անկեղծ, բռնություն չհանդուրժող: Սա է Թումանյանի մարդ մարդու իդեալը:

Մանկուց ծանոթ լինելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններին՝ աշակերտները ավելի հեշտ ու ամուր են ընկալում մարդասիրական այն արժեքները, որոնք սրբացնում է մեծ բանաստեղծը: Իսկ բռնակալը, տմարդին դատապարտված է կործանման…

Մարդու կյանքը մի ակնթարթ է տիեզերքի հավերժության մեջ, բայց նրա վեհ գործը անմահ է: Տարիների, հազարամյակների ակնթարթներից եկող ժողովրդական այս իմաստնությունը հայտնի պոեմում դառնում է մարդկային արարքների գնահատման չափանիշ, առարկայանում է դրամատիկ կերպարների միջոցով: Երեք կերպարների՝ Թաթուլ իշխան, Թմկա տիրուհի, Նադիր շահ, ու նրանց անձերի նկատմամբ աշակերտը ունի պարզորոշ, հստակ վերաբերմունք: Ուղղորդել նրանց դեպի շրջապատը՝ գտնելու լավ ու վատ գործի օրինակներ՝ գիտակցելով, որ լավ ու վատ էությունը կախված չէ չափից ու հանգամանքից. Սա կլինի պոեմի հանգամանքներից մեկը:

Դասերից մեկն էլ հետադարձ հայացքն է իր գործին և ինքնաքննադատությունը: Նադիր շահը՝ բռնակալը, մենության մեջ զգում է իր արարքի արգահատելի լինելը: Թմկա տիրուհին իր հանդուգն պատասխանով արագացնում է իր վախճանը, քանզի խիղճը ամենամեծ դատավորն է:

Նաև խորհում ես. գեղեցիկը պիտի մարդկային լինի, իսկ մարդկայինը գեղեցիկ:

Կիրակոսյանը մեթոդական ձեռնարկում գրում է <<Ոչ մի պատանի չի կարող անտարբեր անցնել այն ամենի կողքով, ինչը իրեն գեղեցիկ է թվում:Խնդիրն այն է, թե գեղեցիկը զգալու և գնահատելու ինչ չափանիշներ են գործում անհատի ենթագիտակցության մեջ և զգացմունքային աշխարհում, ինչ է ընդունում նաիբրև գեղեցիկ>>:[2; 70]

Ինչու է մարդը սքանչանում բնությունով, ինչու է հոյակերտ վանքը տպավորվում հիշողության մեջ: Լավ արարք ստիպում է հուզվել: Երբ սիրում ես, ողջ աշխարհն արևոտ ու լուսառողող է թվում: Հենց դա է գեղեցիկի պահանջը, դա է աննկատ մարդու կյանքը վերափոխում դեպի լավ:

Բայց հասկանալի է, որ գրականություն առարկայի ուսուցման ընթացքում գեղեցիկը զգալու և բարձր ճաշակ ձևավորելու համար ինչ-որ հատուկ ժամեր չկան. այդ նպատակը անբաժան է ուսուցման ողջ գործընթացից:

Գրականությունը անհատի աժեքային համակարգը ամբողջացնելու անսահման հնարավորություններ է տալիս: Գրականությունը պիտի ընթերցողին մոտեցնի իդեալականին, որը հենց գեղեցիկն է:Միստիկ գրողը ամեն գեղեցիկի մեջ տեսնում է Աստծուն, իսկ գրողը ամեն գեղեցիկ իդեալական է համարում՝ տեսանելի, շոշափելի կամ վերացական:

Հենց վերոգրյալ նպատակին են ծառայում <<հավերժական>> թեմաները՝ սեր, բնություն, կյանք, մահ՝ առավելապես բանաստեղծության մեջ:

Չարենցի՝ օրագրում տեղ գտած <<Տաղարան>> շարքում կան թե՛ լույս ու ջերմություն, թե՛ կյանքի ստվերոտ կողմեր, որոնք ցավ են պատճառում բանաստեղծին, բայց մարդու անտարբերությունը, գեղեցիկ կնոջ մերժումը փարատվում են դարձյալ սիրով՝ ամենավեհ դրսևորմամբ՝ հայրենասիրությամբ, որին պիտի ձգտի յուրաքանչյուր հայ մարդ:

Միշտ չէ, որ սիրո ուղին վարդերով է պճնված.
երբեմն պիտի պայքարել, նաև զոհաբերվել սիրո կրակներում: Պատանու հոգեբանության մեջ սա կարելի է արմատավորել <<Փարվանա>> բալլադի միջոցով: Անշեջ հուրը միայն հավերժական սերը չէ. այն կատարյալ երջանկությունն է, որի մասն է նաև սերը: Փարվանաները խորհրդանշում են կատարյալի ձգտող սերունդներին: Երբ աշակերտը գիտակցում է սա, պետք է օգնել, որ հասկանա, որ , եթե համընդհանուր երջանկությունը, ողջ մարդկության երջանկությունը հավերժական իդեալ է, ապա անհատի կյանքում այն իրագործելի ձգտում է:

Դեռ երկար կարելի է քննարկել ստեղծագործություններ հայ գրականության դպրոցական դասագրքերից, որոնք օգնում են սովորողի արժեհամակարգի ձևավորմանը:

Գրականության դերը անհատի կյանքում հենց նրանով է կարևորվում, որ սովորեցնում է ոչ միայն ճիշտ ապրել, այլև գեղեցիկ ապրել:

Ճակատագրի սև ձեռքով մենք շատ կորուստներ ենք ունեցել: Այդ կորուստների ցավը արտացոլվել է մեր բանահյուսության մեջ, մեր վաղնջական ու նորօրյա գրականության մեջ, բայց մեր ժողովուրդը եղել և մնում է կենսասեր ու մարդասեր, որն էլ օգնում է չկորցնելու հավատը կյանքի նկատմամբ: Այս հավատով էլ պիտի դաստիարակվի յուրաքանչյուր հայ սերունդ:

Հարցադրման մեթոդի շահավետությունը.

Ուսուցումը արդյունավետ է, եթե գործընթացին մասնակցում են բոլոր աշակերտները: Եթե դասին կա պասիվ թեկուզ մեկ աշակերտ, ուրեմն ինչ-որ տեղ թերացում է եղել:

Ուսուցիչը պետք է մտածի այնպիսի շարժառիթներ, որ դասին մասնակցելը պարզապես դառնա մղում, անհրաժեշտ մի բան:

Դասավանդման ժամանակ մեթոդների ընտրությունների տեղին կիրառումը էապես նպաստում է ուսման որակի բարձրացմանը:

Հարցերի կիրառումը դասապրոցեսում զգալիորեն բարձրացնում է սովորողների ակտիվությունը, դասին մասնակից դառնալու ձգտումը:

Թե՛ հարց տալը, թե՛ հարցին պատասխանելը առանցքային են ուսումնառության մեջ:

Հարցերի միջոցով ոչ միայն կարելի է ստուգել սովորածը, խթանել վերլուծական մտածելակերպը, ամրապնդել ձեռք բերածը:

Շատ կարևոր են հարցեր տալու հմտությունները, հարցերի տրամաբանված շարունակությունը, որը կբերի աշակերտի զգոնության բարձրացման:

Երբ աշակերտը մտածում է որոշակի ընտրված հարցերի շուրջ, սա նույնպես բերում է արժեհամակարգի հարստացման:

Մեր պարագայում կարելի է նախապես մշակել ենթատեքստով, հետադարձ, հուշող, ուղղորդող այնպիսի հարցեր, որոնց պատասխանները մտածելու առիթ կտան:

Օրինակ.

1. Ո՞ր հերոսին կուզենայիք նմանվել, ինչու՞:
2. Ի՞նչ կարող եմ բացատրել բացակա ընկերոջս:
3. Ինչը կփոխեի հերոսի վարքագծում:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

- Գրականության քննարկածս թեմաները միշտ արդիական են և ունեն իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական, վեհ արժեհամակարգ ունեցող սերունդ, փորձել շտկել սովորողի բնավորության մերժելի հատկանիշները, թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական հայացքները:
- Սովորողների հետաքրքրությունները բացահայտելով՝ կարելի է ուղղորդել նրանց, կունենան հայեցի դաստիարակություն, գիտակցել տալ հայրենիքի, հերոսության, սխրանքի, ազնիվ մղումների արժեքը:
- Կերպարների հակադրման և համադրման արդյունքում, հնարավորինս ներգրավելով բոլոր աշակերտներին, կարող ենք հասնել այն բանին, որ աշակերտը ճիշտ գնահատի հերոսության դրվագները, քննադատի և մերժի բացասական երևույթները:
- Երբ աշակերտի մոտ հստակ ձևավորվում է սեփական դիրքորոշում, նա համարձակ արտահայտում է այն՝ հարգելով նաև ընկերոջ կարծիքը, պատրաստ է լինում քննադատական խոսք լսելու, հարկ եղած դեպքում պաշտպանելու իր դիրքորոշումը:
- Գրական երկերում վերհանելով իրական արժեքները՝ աշակերտը կարող է ըմբռնել արժեքի միշտ արդիական լինելը, հասկանալ, որ արժեհամակարգի տարրերը՝ հայրենասիրությունը, հայրենիքը պաշտպանելուն պատրաստ լինելը, հարազատ ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելը, ազնիվ և կամային անհատ լինելը, միշտ են այժմեական, անհրաժեշտ և կարևոր որպես հայ ճիշտ ապրելու դժվարին ճանապարհին:
- Հայ գրականության ուսումնական նյութերը միշտ սիրելի և հետաքրքիր են սովորողին, ահա ինչու նոր սերդնին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել գրական սիրված հերոսների օրինակով, որոնք կրթել ու դաստիարակել են բազում սերունդներ և չեն կորցրել իրենց արդիականությունը:

- Գրականություն առարկան իր հերոսների թարմ ու դիպուկ խոսքով, մտքի խորությամբ, հյութեղ լեզվով շարունակում է իր առաքելությունը սովորողի մարդ դառնալու ոչ դյուրին ճանապարհին :

Արժեհամակարգի ձևավորման վրա ազդեցություն ունեն հումանիտար բոլոր առարկաները , բայց գրականության դերը անփոխարինելի է:

Գրականություն

1. Եղիազարյան Գ. <<Անհատի արժեհամակարգի կողմնորոշիչները>>, Երևան 2017, 38 էջ
2. Կիրակոսյան Վ. <<Գրականությունը 7-9-րդ դասարաններում>> Երևան 2006, 87 էջ
3. Հայոց լեզվի և գրականության առարկայական չափորոշիչ, Երևան 2006, 35 էջ
4. Սուխոմլինսկի Վ . <<Սուխոմլինսկին դաստիարակության մասին>> Երևան 1976, 335 էջ